քան աղէտներ, սպառնալով անոր կատարեալ չնչումի վտանգը։ Մենք խաղաղութեան մարդիկ ենք, և համոզուած ենք որ իզուր կոչ չենք ըներ ձեզ՝ նախատուած մարդկութեան անունով։ Այդպիսի միջոցներով մեր ընդհանուր մարդկութիւնը նոր պարտք մը ևս պիտի ունենայ ձեզի՝ երախտագիտութեան և հիացումի։»

(Բոստընի «Հայրենիք»)

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

—Մեր նոր բաժանորդներից նրանք որոնք կը ցանկանան ձեռք բերել «Հաջի Բարա» վէպի այն մասը, որ սպուել է 1905 թ. ընթացքում—պէտք է ուղարկեն ճանապարհածախք 50 կոպ.։ Այդպիսի բաժանորդների համար «Հաջի Բարայի» Ա. հատորի (որ սպուել է 1904 թ.-ին) գինն է 1 ր. 50 կ. ճանապարհածախքով և 1 ր. առանց ճանապարհածախքի։ Նոր բաժանորդներից նրանք, որոնք թիւրիմացութեամբ ստացած չեն լինի 1905 թ. Նոյեմբեր—Դեկտեմբեր ամիսների համարը (ձրիաբար) —թող հաճեն բաց նամակով իմաց տալ մեզ այդ մասին։

—Հատով «Մուրճ» կարելի է գնել.

Թիֆլիսում—խմբագրատանը և «Գուտենբերգ» գրախ.

Բազում—Բունիաթեանի գրախանութում։

—Բազուից բժիշկ Գ. Սարգսեանի մի բաժանորդագնով 1906 թ. «Մուրճ» ուղարկուելու է Թիֆլիսի էժանագին գրադարանին։

—Մեծ. պ. Ս. Վանեանի ձեռքով ստացանք Սուդանի (Աֆրիկա) հայ գաղթականների մէջ հանգանակած 137 ր. 75 կոպ. «ի նպաստ Կովկասի հայ արիածեալ եղբայրներու»։